Հավելված
Հայաստանի Հանրապետության Ախուրյանի
«Կամոյի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի 2024 թվականի
մարտի 1-ի N 158-Լ հրամանի

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Կամոյի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

| N | **Թափուր պաշտոնի անվանումը** | **Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները)** | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝** | **Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը** |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Կամոյի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության<br>1.Մեթոդիստի (տնօրենի ուսումնական գծով տեղակալ)<br>-0.25 դրույք /30.000 ՀՀ դրամ աշխատավարձ)<br>2.Ֆիզկուլտուրայի հրահանգիչ-0.25 դրույք /30000 ՀՀ դրամ աշխատավարձ/,<br>3.Երաժշտության ղեկավար-0.25 դրույք /30000 ՀՀ | 1)**Որակավորման պահանջները**<br>Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստը տնօրենի ուսումնական գծով տեղակալ)պետք է ունենա՝ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ վերջին յոթ տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում կամ մանկավարժական գործունեության՝ առնվազն երկու տարվա մանկավարժական գործունեության ստաժ:<br>Ֆիզկուլտուրայի հրահանգչի պաշտոնը զբաղեցնողը պետք է ունենա միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական գործունեության առնվազն երկու տարվա մանկավարժական գործունեության ստաժ:<br>Երաժշտության ղեկավարի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա միջին մասնագիտական կամ բարձրագույն /բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս/ մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ:<br><br>2) **Ընդհանրական պահանջները**<br>Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստը տնօրենի ուսումնական գծով տեղակալը, ֆիզկուլտուրայի հրահանգչի և | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը,** որը՝<br>1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.<br>2)դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.<br>3)տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական | 1)դիմում Ձև1)<br>2)անձը հաստատող փաստաթուղթ.<br>3)կրթության մասին փաստաթուղթ<br>4)աշխատանքային ստաժի մասին տեղեկանք<br>5)ինքնակենսագրություն ձև4<br>6)մեկ լուսանկար՝ 3×4չափի.<br>7)այլ պետությունների քաղաքացիները՝Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ.<br>8)Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.<br>9)հրատարակված հոդվածների ցանկ կամ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | դրամ աշխատավարձ/: | երաժշտության ղեկավարի պաշտոնները զբաղեցնողը պետք է իմանան պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները. ա. դաստիարակչական հարցերը, ըստ ոլորտի՝ կրթության պետական չափորոշիչները, նորմատիվ փաստաթղթերը և մեթոդական հանձնարարականները, մանկավարժության, հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի և հիգիենայի, մինչ բժշկական օգնության հիմունքները, աշխատանքի անվտանգության, երեխաների կյանքի և առողջության պահպանման կանոնները: | գործունեության իրականացմանը. 4)դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(դրանց առկայության դեպքում): |
| | | **Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պահանջները:** | | **Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:** |
| 2 | **Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը** | **Դիմումների և փաստաթղթերի ընդունումը** | | **Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները** |
| | **Վայրը՝** ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գ.Կամո, 1 փողոց շենք 14 /մանկապարտեզ/ **Օրը՝** 2024 թվականի ապրիլի 4-ին ժամը՝ 11:00 | Փաստաթղթերը ներկայացնելու,լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գ.Կամո, 1 փողոց շենք 14 /մանկապարտեզ/<br>**Հեռ. 093 889 321**<br>**Մրցույթը անց է կացվելու 2 փուլով՝ գրավոր և բանավոր:**<br>**Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝** https://escs.am/am/news/11978: | | **2024 թվականի մարտի 1-ից մինչև 2024 թվականի ապրիլի 1-ը ներառյալ** |
| | | **Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրերից:**<br>**Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել www.azdarar.am, akhuryan.am** կայքերում: | | |